

## Գլուխ տասներեք

Այս շրջանը՝ 1916 թվականի ամառը մեր խմբի բոլոր անդամների մոտ տպավորվել է չափազանց մեծ աշխատանքային ներքին լարվածությամբ: Մենք բոլորս զգում էինք, որ պետք է շտապել, որ մեր առաջ դրված առաջադրանքների համեմատ մենք շատ քիչ աշխատանք ենք կատարում: Մենք գիտակցում էինք, որ ավելին իմանալու ցանկությունը կարող է անհետանալ այնքան պատահական, որքան այն հայտնվեց, և մենք փորձում էինք մեր վրա կատարվող աշխատանքի ճնշումն ավելացնել և ամեն ինչ անել, քանի դեռ բարենպաստ պայմաններ կան:

Ես մի շարք վարժություններ և փորձարկումներ սկսեցի անել՝ օգտագործելով այս բնագավառում իմ ունեցած որոշակի փորձը, որը ես արդեն ձեռք էի բերել: Ես մի քանի կարճ, բայց բավականին դժվար պասեր պահեցի: Ես դրանք “բավականին դժվար” եմ անվանում, որովհետև ես չէի ուտում ոչ թե հիգենիկ տեսանկյունից ելնելով, այլ փորձում էի օրգանիզմին որքան հնարավոր է ուժեղ ցնցման ենթարկել: Ես նաև սկսեցի “շնչել” որոշակի օրինաչափությամբ, որը պասի հետ միասին ինձ շատ հետաքրքիր հոգեբանական վիճակների էր հասցրել, ինչպես նաև “մտքի աղոթքի կրկնությունը” մեթոդն ինձ շատ էր օգնել կենտրոնացնել իմ ուշադրությունը և հետագոտել ինքս ինձ: Նաև արել եմ մի շարք բավականին բարդ մտավոր վարժություններ ուշադրությունը կենտրոնացնելու համար: Ես մանրամասն չեմ նկարագրում այս փորձերը և վարժությունները, քանի որ դրանք իրականում փորձեր էին ինքս ինձ զգալու համար՝ առանց կոկրետ գաղափար կազմելու դրանց հնարավոր արդյունքների մասին:

Այս ամենը իրար հետ վերցված, ինչպես նաև մեր զրույցները և հանդիպումները ինձ պահում էին անսովոր լարվածության մեջ և մեծ հաշվով, իհարկե, ինձ նախապատրաստում էին մի շարք տարօրինակ իրավիճակների միջով անցնելու համար, որոնք ինձ սպասվում էին 1916ի օգոստոսին, որովհետև Գ.ը իր խոսքի տերն եղավ, և ես տեսա որոշակի փաստեր և միևնույն ժամանակ հասկացա, թե ինչ ի նկատի ուներ Գ.ը, երբ ասում էր, որ շատ ուրիշ բաներ են հարկավոր նախքան փաստերը<sup>1</sup>:

Այս ուրիշ բաների շարքում էին նախապատրաստվելը, որոշ մտքերի հասկանալը, որոշակի վիճակում գտնվելը: Այդ վիճակը, որը էմոցիոնալ է, հենց այն է, ինչ մենք չենք կարող հասկանալ, այսինքն՝ մենք չենք հասկանում որ դա անխուսափելի է, և փաստերը առանց դրա անհնարի են:

Այժմ հերթը հասավ ամենաբարդ բանին, քանի որ այն հնավարո չէ բացատրել փաստերով: Ինչո՞ւ:

Ես շատ հաճախ էի ինձ այս հարցը տալիս: Ես միայն կարող էի ասել, որ դրանք չափազանց շատ անձնական էին ներառում իրենց մեջ հանրությանը պատմելու համար: Իմ կարծիքով միայն ինձ մոտ չէր այդ տպավորությունը, այլ միշտ էլ այդպես է եղել: Ես հիշում եմ, որ նմանատիպ պնդումները ինձ միշտ կատաղեցնում էին, երբ ես կարդում էի ուրիշների հուշերը, ովքեր անցել էին մնանատիպ փորձությունների միջով և այնուհետև հրաժարվել էին դրանց մասին խոսելուց: Նրանք ինչ-որ հրաշք էին փնտրում և այսպես թե այնպես, այն գտել են: Բայց երբ նրանք գտնում էին այն, ինչ փնտրում էին, անպայման ասում էին, “Ես այն գտա,

<sup>1</sup> Գլուխ առաջին, էջ 23

բայց չեմ կարող բացատրել, թե ինչ եմ գտել”: Դա ինձ միշտ էլ արհեստական կամ հորինված էր թվացել:

Ճիմա ես գտնվում եմ ճիշտ նույն վիճակում: Ես գտել եմ այն, ինչ փնտրում էի: Ես տեսել և ուսումնասիրել եմ փաստեր, որոնք միանգամայն անցնում էին մեր իմացած հնարավորի, գիտակցածի և ընդունածի սահմանները, և ես ոչինչ չեմ կարող պատմել այդ մասին:

Իմ ուսումնասիրածի մեծ ամասնության էությունը բովանդակության մեջ է, և այն նոր գիտելիքի, որը ստանում ես: Բայց նույնիսկ դրանց արտաքին դրսևորման նկարագրությունը շատ մոտավոր կլինի: Ինչպես արդեն ասեցի, բոլոր այդ պատերից և փորձերից հետո ես բավականին լարված և նյարդայնացած էի և ֆիզիկապես սովորականից ավելի անկայուն վիճակում: Ես ժամանեցի Ի. Ն. Մ.-ի տուն Ֆինլանդիայում, ում Պետերբուրգյան տանը մենք հաճախ անցկացնում էինք մեր հանդիպումները: Գ.ը և մոտավորապես ութ այլ անձինք այնտեղ էին: Երեկոյան գրույցների ժամանակ մենք շարունակեցինք փորձել պատմել մեր կյանքը: Գ.ը շատ կոպիտ և սարկաստիկ էր, չնայած որ նա փորձում էր պրովոկացիայի ենթակրել մեկ մեկին, հետո մյուսին՝ մասնավորապես շեշտելով մեր վախկոտությունը և մեր ծուլությունը:

Ես հատկապես շատ վիրավորվեցի, երբ նա սկսեց բոլորի մոտ պատմել մի բան, որը ես բացարձակ իմ կարծիքով գաղտնի կիսվել էի իր հետ բժիշկ Դ.-ի մասին: Իր ասածները չափազանց տհաճ էին ինձ համար, մասնավորապես այն պատճառով, որ միշտ մեղադրել եմ ուրիշներին նմանատիպ դեպքերում:

Մոտավորապես ժամը ութն էր, երբ նա ինձ, բժիկ Ս.-ին և Ջ.-ին կանչեց մի փոքր առանձնասենյակ: Մենք նստեցինք հատակին “թուրքական ոճով” և Գ.ը սկսեց բացատրել և մեզ ցույց տալ որոշ դիրքեր և շարժումներ: Ես չէի կարող չնկատել, որ իր բոլոր շարժումներում կար ապշեցուցիչ վստահություն և ճշգրտություն, չնայած այն բանին, որ այդ դիրքերը և շարժումները մարմնամարզիկի համար ոչ մի բարդություն չէին առաջացնի և նա կկարողանար դրանք կրկնել առանց ջանք գործադրելու: Ես երբեք ինձ մարմնամարզիկի դերում չեմ պատկերացրել, բայց ես կարողանում էի արտաքինից կրկնել այդ շարժումները: Գ.ը բացատրեց, որ չնայած մարմնամարզիկը նույնպես կարող է կրկնել այդ շարժումները, նա դրանք այլ ձևով կանի, իսկ ինքը այդ շարժումները անում է մկանները թուլացրած վիճակում: Այնուհետև Գ.ը վերադարձավ այն թեմային, թե ինչու մենք չենք կարող մեր կյանքը պատմել: Եվ սրանով էլ սկսվեց հրաշքը:

Ես միանգամայն վստահ կարող եմ ասել, որ Գ.ը ոչ մի արտաքին գործոն չօգտագործեց, այսինքն՝ նա ինձ ո՛չ թմրադեղ տվեց, ոչ էլ հիպնոսի որևէ մեթոդ կիրառեց: Ամեն ինչ սկսվեց *նրա մտքերը լսելուց*: Մենք նստած էինք մի փոքր սենյակում առանձ խալու փայտե գետնի վրա, ինչպես ընդունված է գյուղական տներում: Ես նստած էի Գ.ի դիմաց, իսկ բժիշկ Ս.-ն և Ջ.-ն՝ կողքերում: Գուշիկը խոսում էի մեր “հատկանիշներից”, մեր անկարողությունից ասելու կամ տեսնելու ճշմարտությունը: Նրա խոսքերը ինձ սկեցին շատ անհանգստացնել: Հանկարծ սկսեցի նկատել, որ այն ամենը, ինչ նա մեզ ասում էր, դրանք “մտքեր” էին, որոնք վերաբերում էին ինձ: Ես որսացի այդ մտքերից մեկը և պատասխանեցի սովորականի պես բարձրաձայն: Գուշիկը ինձ գլխով արեց և դադարեց խոսել: Բավականին երկար դադար եղավ: Նա դեռ նստած լուր էր: Մի փոքր անց ես իր ձայնը իմ մեջ լսեցի, ասես կրծքիցս բխեր այն, հենց սրտիս կողքին: Նա ինձ կոնկրետ հարց տվեց: Ես նայեցի նրան: Նա դեռ նստած ժպտում էր:

Այդ հարցը ինձ մոտ շատ ուժեղ զգացմունքներ արթնացրեց, բայց ես դրական պատասխանեցի:

- Ինչո՞ւ նա ասեց դա, - հարցրեց Գ.ը՝ թեքվելով Ջ.-ին և Ս.-ին, - մի՞թե ես իրեն ինչ-ոչ բան հարցրեցի:

Այնուհետև նա նույն կերպ ինձ մի ավելի բարդ հարց տվեց և ես չեզոք ձայնով սովորականի պես պատասխանեցի: Ջ.-ն և Ս.-ն ապշած տեսք ունեին, մանավանդ Ջ.-ն: Այս երկխոսությունը, եթե կարելի է այն այդպես անվանել, շարունակվեց ավելի քան կես ժամ: Ես շատ անհանգստանում էի Գ.ի ասածներից և հարցերից, որոնք չեմ կարող այժմ լուսաբանել: Դրանք կապված էին այնպիսի հարցերի հետ, որոնք ես պետք է կամ ընդունեի, կամ էլ թողնեի աշխատանքը: Գ.ը ինձ մեկ ամիս ժամանակ տվեց: Ես հրաժարվեցի՝ ասելով, թե որքան էլ դժվար լինի իր պահանջները, ես պատրաստ եմ միանգամից այդ ամենը կատարել, բայց նա, այնուամենայնիվ, պնդեց: Վերջապես մենք կանգնեցինք և գնացինք պատշգամբ: Տան մյուս կողմը մի մեծ պատշգամբ կար, որտեղ և հավաքված էին մնացած մարդիկ:

Այն մասին, թե դրանից հետո ինչ տեղի ունեցավ, չեմ կարող շատ բան ասել, բայց ամենակարևորը տեղի ունեցավ հետո: Գ.ը խոսում էր Ջ.-ի և Ս.-ի հետ: Այնուհետև նա ինչ-որ բան ասեց իմ մասին, որը ինձ վրա խիստ ազդեց և ես ցատկեցի իմ աթոռից և գնացի բակ: Այնտեղից ես քայլեցի դեպի անտառ և երկար քայլեցի անտառով մթնոթյան մեջ ամենատարօրինակ զգացմունքներով և մտքերով պարփակված: Երբեմն ինձ թվում էր, թե որևէ բան եմ գտել, հետո՝ որ այն կորցրել եմ:

Այսօր վիճակը մեկ-երկու ժամ տևեց: Վերջապես այն պահին, երբ իմ ներքին հակասությունները հասան իրենց գագաթնակետին, գլխումս ծագեց մի միտք, որը ամեն ինչ պարզ դարձրեց և Գ.ի բոլոր ասածները և իմ դիրքորոշումները զցեց իրենց տեղերը: Ես տեսա, որ Գ.ը ճշմարիտ էր: Այն ամենը, ինչ ես ճիշտ և հաստատուն էի համարում իմ մեջ իրականում գոյություն չունեի: Բայց ես մեկ ուրիշ բան էի գտել: Ես գիտեի, որ նա ինձ չի հավատա և կսկսի ծիծաղել ինձ վրա, եթե ես այդ ամենը ի ցույց դնեմ: Այն ինձ մոտ որևէ կասկած չէր հարուցում և ապագան ցույց տվեց, որ ես ճշմարիտ էի:

Երկար ժամանակ ես նստած ծխում էի բացատի նման մի տեղ: Երբ տուն վերադարձա, փոքր պատշգամբում արդեն մութ էր: Մտածելով, թե բոլորը արդեն քնել են՝ գնացի իմ սենյակ քնելու: Իրականում Գ.ը մնացածի հետ այդ ժամանակ ընթրում էր մեծ պատշգամբում: Պարկելոց քիչ անց մի տարօրինակ ցնծություն նորից պատեց ինձ, իմ զարկերակը սկսեց ակտիվորեն խփել և ես նորից ներսից լսեցի Գ.ի ձայնը: Այս անգամ ես ոչ միայն լսեցի, այլ նաև մտովի պատասխանեցի իրեն, իսկ ինքը՝ ինձ: Մի շատ տարօրինակ բան կար մեր երկխոսության մեջ: Ես փորձում էի ինչ-որ փաստ գտնել դրա եղելության վերաբերյալ, բայց չկարողացա: Վերջիվերջո, այս ամենը կարող էր պարզապես երևակայության արդյունք լինել կամ երազելու նման մի բան, որովհետև չնայած, որ ես փորձում էի Գ.ին մի կոնկրետ բան հարցնել, որը այլևս կասկած չէր հարուցի իմ մեջ դրա եղելության կամ նրա՝ դրան մասնակցելու վերաբերյալ, ես չէի կարող որևէ ծանրակշիռ բան գտնել: Իսկ այն հարցերը, որոնք ես տալիս էի իրեն և ստանում էի դրանց պատասխանները, ես ինքս կարող էի հարցնել և պատասխանել դրանց: Ինձ մոտ նույնիսկ այն զգացումն էր, որ նա խուսափում էր կոնկրետ պատասխաններից, որը հետագայում կարող էր և որպես ապացույց ծառայել, որովհետև իմ որոշ հարցերին նա միտումնավոր շատ վերացական պատասխաններ էր տալիս: Բայց այն

զգացումը, որ դա երկխոսություն էր, շատ ուժեղ էր ու բացարձակապես նոր ինձ համար և այն նման չէր ուրիշ ոչ մի բանի:

Երկարատև դադարից հետո Գ.ը ինձ մի հարց տվեց, որը ինձ միանգամից ստափեցրեց, այնուհետև լռեց՝ ասես սպասելով պատասխանի:

Նրա ասածը միանգամից դադար տվեց իմ բոլոր մտքերին և զգացումներին: Դա վախ չէր, համենայն դեպս ոչ գիտակցական վախ, որ մեկը գիտակցում է, որ նա վախենում է, բայց ես ամբողջովին դողում էի և բառացիորեն կատվածահար վիճակում էի գտնվում, որ ի վիճակի չէի գոնե մեկ բառ արտաբերել, չնայաց որ ջանք չէի խնայում դրական պատասխան տալու համար:

Զգում էի, որ Գ.ը սպասում էր իմ պատասխանին և շատ երկար չի սպասելու:

- Դե, դու այժմ հոգնել ես, - վերջապես ասեց նա, - թողնենք դա հաջորդ անգամվա համար:

Ես սկսեցի ինչ-որ բաներ ասել, կարծեմ խնդրեցի նրանից մի փոքր էլ սպասել, ինձ ժամանակ տալ հասկանալու իր ասածը:

- Մեկ ուրիշ անգամ, - ասեց նրա ձայնը, - այժմ քնիր:

Ձայնը դադարեց:

Ես երկար ժամանակ չէի կարողանում քնել: Առավոտյան երբ դուրս եկա փոքր պատշգամբ, որտեղ մենք երեկոյան նստած էինք, Գ.ը նստած էր այգում մի փոքր կլոր սեղանի մոտ քսան ոտնաչափ հեռու: Մեր մարդկանցից երեքը նրա հետ էին:

- Հարցրեք նրան, թե ի՞նչ է տեղի ունեցել երեկ գիշեր, - ասաց Գ.ը:

Զգիտեմ ինչու դա ինձ շատ բարկացրեց: Ես թեքվեցի և սկսեցի քայլել դեպի պատշգամբը: Հենց հասա այնտեղ, նորից լսեցի Գ.ի ձայնը ինձ մեջ՝ “կանգնի՛ր”: Ես կանգ առա և թեքվեցի դեպի Գ.ը: Նա ժպտում էր:

- Ո՞ւր ես գնում, նստիր այստեղ, - ասեց նա սովորական ձայնով:

Ես նստեցի նրա հետ բայց չէի կարողանում որևէ բան ասել, ոչ էլ ցանկություն ունեի: Միննույն ժամանակ մի տեսակ տարօրինակ մտքի պայծառություն զգացի իմ ներսում և որոշեցի կենտրոնանալ որոշակի խնդիրների վրա, որոնք ինձ հասկապես շատ բարդ էին թվում: Ես մտածեցի, որ հնարավոր է, որ այսպիսի տարօրինակ հոգեվիճակում ես կարողանաի գտնել այն հարցերի պատասխանները, որոնք չէի գտնում սովորական վիճակում:

Ես սկսեցի մտածել ճառագայթների առաջին եռյակի ստեղծման մասին, այն երեք ուժերի մասին, որոնք միասին մեկ ուժ էին կազմում: Ի՞նչ էին դրանք իրենցից ներկայացնում: Կարո՞ղ ենք մենք դրա սահմանումը տալ: Կարո՞ղ ենք հասկանալ դրանց իմաստը: Իմ գլխում ինչ-որ բան սկսեց կազմավորվել, բայց հենց փորձեցի դրանք վերածել բառերի, այն իսկույն հողս ցնդեց: Կամք, գիտակցություն... իսկ ո՞րն է եռյակը: Ես հարց էի տալիս ինձ: Թվում էր, թե հենց կարողանամ տալ երրորդի անվանումը, ամեն ինչ կհասկանամ:

- Վերջացրու, - ասաց Գ.ը բարձրաձայն:

Ես թեքվեցի դեպի նա և նա ինձ նայեց:

- Դրան դեռ շատ ժամանակ կա: Այժմ դու չես կարող դրա պատասխանը գտնել: Ավելի լավ է քո մասին մտածես, քո աշխատանքի:

Մեզ հետ նստած մարդիկ մեզ էին նայում շփոթված հայացքներով: Գ.ը իմ մտքերին էր պատասխանել:

Այնուհետև, մի շատ տարօրինակ բան պատահեց, որը շարունակվեց ամբողջ օրը և նույնիսկ դրանից հետո էլ: Մենք Ֆինլանդիայում երեք օր ավել մնացինք: Այս երեք օրվա ընթացքում մենք ամենատարբեր զրույցներն ունեցանք ամենատարբեր թեմաներից: Ես ամբողջ ժամանակ գնտվում էի տարօրինակ հոգեբանական վիճակում, որը երբեմն սկսում էր ինձ նույնիսկ ջղայնացնել:

- Ինչպե՞ս կարող եմ սրանից ձերբազատվել: Ես այլևս չեմ կարող այն տանել:

- Դու ուզո՞ւմ ես նորից քնել, - հարցրեց Գ.ը:

- Իհարկե, ո՛չ, - պատասխանեցի ես:

- Բա էլ ինչո՞ւ ես հարցնում: Մա այն է, ինչ դու ուզում էիր, օգուտ քաղի դրանից: Դու այժմ քնած չես:

Չեմ կարծում, որ սա ամբողջովին ճիշտ էր: Ես անկասկած “քնում էի” որոշ պահերի՞ն: Այդ ժամանակ իմ ասածները շատ հաճախ էին զարմացնում իմ ընկերներին այս տարօրինակ արկածների ժամանակ: Ես ինքս էի շատ բաների վրա զարմանում: Շատ բաներ ասես քնի էին նման, շատերը ասես կապ չունեին իրականության հետ: Անկասկած ես շատ բաներ հորինում էի: Հետագայում շատ տարօրինակ էր վերհիշել այն, ինչ ես ասել էի:

Վերջապես մենք գնացինք Սանկտ Պետերբուրգ: Գ.ը գնաց Մոսկվա և մենք Ֆիննական կայարանից անմիջապես գնացինք Նիկոլանվսկի կայարան: Մի բավականին մեծ խումբ էր հավաքվել նրան ճանապարհելու: Նա գնաց:

Բայց հրաշքը դրանով ամեննին էլ չավարտվեց: Նոր և շատ տարօրինակ երևույթներ տեղի ունեցան այդ երեկոյան, և ես նորից զրուցեցի նրա հետ, երբ նա գտնվում էր Մոսկվայի գնացքի մեջ իր առանձնախցում:

Սրան շատ տարօրինակ շրջան հաջորդեց: Այն մոտ երեք շաբաթ տևեց: Այս ընթացքում ես սկսեցի “քնած մարդկանց” տեսնել: Թույլ տվեք բացատրեմ:

Գ.ի գնալուց երկու-երեք օր անց ես քայլում էի Տրոյսկի փողոցով և հանկարծ նկատեցի մի մարդու, որը քայլում էր դեպի ինձ. նա քնած էր: Դա անկասկած այդպես էր: Չնայած նրա աչքերը բաց էին, նա քայլում էր՝ ամբողջովին խրված երազների մեջ, որոնք ասես ամպեր լինեին նրա դեմքի շուրջ: Իմ մտքով անցավ, որ եթե ես երկար նայեմ նրա աչքերի մեջ, կկարողանամ տեսնել իր երազները, այսինքն՝ կկարողանամ տեսնել, թե ինչ երազ է նա տեսնում: Նա անցավ: Նրանից հետո ևս մեկը անցավ. նորից քնած: Մի քնած բեռնակիր անցավ երկու ուղևորների հետ: Հանկարծակի ես ինձ զգացի “Քնած դժխուհու” մեջ արքայազնի դերում: Իմ շուրջ եղած բոլոր մարդիկ քնած էին: Դա միանգամայն անկասկած և հաստատուն զգացում էր: Ես հասկացա, թե ինչ էր նշանակում, երբ ասվում էր՝ շատ բաներ կարելի է տեսնել մեր աչքերով, որ մենք սովորաբար չենք տեսնում: Այս զգացումները բոլորներ էին տևում: Այնուհետև դրանք հաջորդ օրը նորից կրկնվում էին ավելի թույլ: Ես միանգամից հայտնաբերեցի, որ փորձելով ինքս ինձ հիշել, ես ի վիճակի եղա բավականին շատ ուժեղացնել և երկարացնել այս զգացումները այնքան, որքան ուժերս կբավականացնեի չձեղվելու, չթողնելու, որ իմ շուրջ գտնվող բաները ինձ շեղեն: Երբ իմ ուշադրությունը շեղվում էր, ես այլևս չէի կարողանում “քնած մարդկանց” տեսնել, քանի որ ես ինքս էի քուն մտնում: Մեր խմբից միայն մի քանիսին պատմեցի այս փորձերի մասին և նրանցից երկուսը, ովքեր փորձել են հիշել իրենք իրենց, նույնատիպ զգացումներ էին ունեցել:

Այնուհետև ամեն ինչ կարգավորվեց: Ես չեմ կարող կոնկրետ ասել, թե ինչ տեղի ունեցավ, բայց իմ մեջ ամեն ինչ գլխիվայր փոխվեց: Անկասկած իմ վերջին երեք շաբաթվա ասածների և պատմածների մեջ բավականին շատ երևակայական բաներ կային: Բայց ես կարողացա տեսնել ինձ, այսինքն՝ ես տեսա իմ մեջ բաներ, որոնք ես նախկինում երբեք չէի նկատել: Դա ոչ մի կասկած չի կարող հարուցել և չնայած որ ես նորից փոխվեցի առաջվա նման, չէի կարող ժխտել, որ դա տեղի է ունեցել և չէի կարող մոռանալ այն:

Մեկ բան անկասկած հասկացա, որ ոչ մի վերին երևույթ, որը գերազանցում է ամենօրյա սովորական բաները, կամ երևույթները, որոնք երբեմն նույնիսկ անվանում են “մետաֆիզիկական”, հնարավոր չէ ֆիզիկական երևույթների նման ուսումնասիրել սովորական մեթոդներով, երբ գիտակցությունը գտնվում է սովորական վիճակում: Կատարյալ անհեթեթություն է մտածել, որ հնարավոր է վերին երևույթները ինչպես՝ տելեպատիան, պայծառատեսությունը, ապագայի մասին գուշակությունները, հոգեմիստիկական երևույթները և այլն, կարելի է ուսումնասիրել նույն կերպ, ինչպես էլեկտրական, քիմիական կամ օդերևութաբանական երևույթները: Այդպիսի երևույթները դիտարկելու և ուսումնասիրելու համար հարկավոր է գտնվել որոշակի հոգեբանական վիճակում:

Ես նույն եզրակացության նորից էի եկել իմ սեփական ուսումնասիրություններից հետո, որոնք նկարագրել եմ “Փորձնական միստիցիզմ” գլխում աշխարհի մոդելի մասին խոսելիս, բայց այժմ արդեն հասկանում եմ, թե ինչու այն հնարավոր չէ:

Երկրորդ եզրակացությանը, որին ես եկա, շատ ավելի բարդ է բացատրել: Այն կապված է իմ որոշ տեսակետների, դրանց արտահայտման ձևերի, ցանկությունների և ձգտումների հետ: Սրանից հետո էր, որ ես բավականին տեսանելի փոփոխություններ նկատեցի ինքս իմ մասին ունեցած կարծիքի, ուրիշների՝ իմ մասին ունեցած կարծիքի և մասնավորապես իմ “գործողությունների մեթոդների” վերաբերյալ, եթե դա կարելի է այդպես անվանել: Բուն փոփոխությունները բնութագրելը բավականին բարդ է: Կարող եմ Ֆմիայն ասել, որ դրանք ամեննին էլ կապված չէին Ֆինլանդիայում տեղի ունեցած դեպքերի հետ, այլ ավելի շուտ դրանք այնտեղ ապրած զգացումների արդյունք էին: Առաջին բանը, որ ես նկատեցի, դա իմ ծայրահեղության հասնող անհատականության գերակշռության թուլացումն էր, որը իմ՝ կյանքի նկատմամբ ունեցած վերաբերմունքի ամենաազդեցիկ մասն էր կազմում: Ես սկսեցի մարդկանց ավելի շատ տեսնել, ավելի շատ զգալ իմ՝ նրանց հետ շփումը: Երկրորդն այն էր, որ հոգուս խորքում սկսեցի գիտակցել բռնության անհնարին լինելու թաքնված բանաձևը, այսինքն՝ բռնի կերպով որևէ բանի հասնելու անօգուտ լինելը: Ես անկասկած պարզ զգացի և այդ զգացումը հետագայում այդպես էլ չկորցրեցի, որ բռնի ճանապարհով որևէ բանի ձգտելը անպայման բացասական արդյունք կտա, այսինքն՝ կաշիստի այն նպատակների դեմ, հանուն որոնց դրանք ուղղված էին: Այն ասես նման լինեք Տոլստոյի չընդդիմանալուն արտաքինից, բայց այն չընդդիմանալ չէր, որովհետև ես դրան հասել էի ոչ թե էթիկական, այլ գործնական տեսանկյունից, ոչ թե այն խնդրից, թե որն է ավելի լավ, և որը՝ ավելի վատ, այլ որն է ավելի արդյունավետ և նպատակահարմար:

Հաջորդ անգամ Գ.ը Սանկտ Պետերբուրգ եկավ սեպտեմբերի սկզբին: Ես փորձեցի հարցնել նրան, թե ինչ կատարվեց Ֆինլանդիայում, ճիշտ էր արդյոք, որ նա ինձ ինչ-որ բան ասեց, որը ինձ վախեցրեց և ինչու ես վախեցա:

- Եթե հարցը դրանում է, նշանակում է, որ դու դեռ պատրաստ չեիր, - ասեց նա:

Նա այլևս ոչինչ չբացատրեց:

Այս այցի ժամանակ գրուցների հիմնական թեման մեզնից յուրաքանչյուրի “հիմնական հատկության” կամ “հիմնական սխալի” մասին էր: Գ.ը ամեն ինչի ձևակերպումը շատ պատկերավոր էր տալիս: Այդ ժամանակ էս հասկացա, որ ոչ բոլորի հատկանիշներն է հնարավոր ձևակերպել: Որոշ մարդկանց մոտ այդ հատկանիշը այնքան թաքնված կարող է լինել տարբեր ձևական դրսևորումների հետևում, որ այն գրեթե անհնար է հայտնաբերել: Եվ այդ ժամանակ մարդը կարող է իր հիմնական հատկանիշը անվանել, ինչպես ինքս իմ հատկանիշն եմ անվանում “Ուսպենսկի”, կամ ինչպես Գ.ը ասեց “Պյոտր Դեմիանովիչ”, իրենց անունով: Այդ հարցում սխալվել հնարավոր չէ, քանի որ յուրաքանչյուրի “Պյոտր Դեմիանովիչը” արտացոլում իր իր հիմնական հատկանիշը:

Երբ որևէ մեկը չէր համաձայնվում իր հիմնական հատկանիշի ձևակերպման հետ, Գ.ը ասում էր, որ դա վկայում է, որ ինքը ճիշտ է:

- Ես միայն չեմ համաձայնվում նրա հետ, որը դուք իմ հիմնական հատկանիշն եք համարում, - ասեց մեր մարդկանցից մեկը, - էս գիտեմ, որ իմ հիմնական հատկանիշը շատ ավելի վատն է, քան դուք եք ասում: Բայց չեմ ժխտում, որ մարդիկ կարող են ինձ տեսնեն այնպես, ինչպես դուք եք բնութագրում:

- Դու քո մասին ոչինչ էլ չգիտես, - ասեց Գ.ը, - եթե իմանայիր, այդ հատկանիշը դու այլևս չեիր ունենա: Իսկ մարդիկ քեզ հաստատ տեսնում են այնպես, ինչպես էս եմ տեսնում, բայց դու չես տեսնում, թե նրանք ինչպես են քեզ տեսնում: Եթե դու ընդունես իմ ասած հատկանիշը, ապա կհասկանաս, թե ինչպես են մարդիկ քեզ տեսնում: Իսկ եթե դու մի ուղի գտնես այս հատկանիշի դեմ պայքարելու և դրան հաղթելու համար, այսինքն վերացնելու դրա *սկամա դրսևորումը* (Գ.ը այս բառերը հատուկ շեշտեց), ապա կկարողանաս նրանց վրա թողնել ոչ թե այսպիսի տպավորություն, այլ այն տպավորությունը, որը կցանկանաս:

Այստեղից սկսվեց մի երկար գրույց այն տպավորության մասին, որ մարդը թողնում է ուրիշների վրա և թե ինչպես կարելի է քո ուզած տպավորությունը ձևավորել նրանց մոտ:

Մարդուն շրջապատողները կարող են տեսնել իր հիմնական հատկանիշը, ինչքան էլ այն թաքնված լինի, չնայած որ միշտ չէ, որ կարող են այն սահմանել: Բայց շատ հաճախ նրանց սահմանումները բավականին դիպուկ են և ճշմարտությանը մոտ: Մականունները շատ լավ օրինակ են. Կ դրանք երբեմն շատ դիպուկ արտահայտում են մարդու հիմնական հատկանիշը:

Տպավորությունների մասին խոսակցությունը մեզ նորից բերեց “ներքին” և “արտաքին” գործոնները հաշվի առնելուն:

- Արտաքին գործոնները հնարավոր չէ տեղին հաշվի առնել, երբ մարդ արդեն լճացել է իր հիմնական սխալի վրա, - ասաց Գ.ը: - Օրինակ Սո-և-Սո-ն (նա մեզանից մեկին այսպես էր անվանել): Նրա հիմնական հատկանիշը *երբեք տանը չլինելն է*: Ինչպես կարող է նա որևէ մեկին կամ որևէ բան հաշվի առնել:

Ես ապշած էի Գ.-ի գեղարվեստական մոտեցման վրա այդ հատկանիշի հարցում: Դա նույնիսկ հոգեբանություն չէր, դա արվեստ էր:

- Հոգեբանությունը նույնպես պետք է լինի արվեստ, - պատասխանեց Գ.-ն, - հոգեբանությունը երբեք չի կարող միայն գիտություն լինել:

Մեզնից մեկ ուրիշի հատկանիշի մասին խոսելիս Գ.ն ասեց, թե նա *ընդհանրապես գոյություն չունի*:

- Հասկացի, ես քեզ ընդհանրապես չեմ տեսնում, - ասեց նա, - Բայց դա չի նշանակում, որ դու միշտ ես այդպես: Բայց երբ դու այնպիսին ես, ինչպես հիմա, դու ընդհանրապես գոյություն չունես:

Մեկ ուրիշին նա ասեց, թե նրա հիմնական հատկանիշը բոլորի հետ ամեն հարցում վիճելն է:

- Ուրեմն ես այլևս երբեք չեմ վիճի, - ոգևորված պատասխանեց նա:

Ոչ ոք չկարողացավ զսպել ծիծաղը:

Հաջորդին, ում հետ Գ.-ն անհատականությունը էությունից անջատելու փորձն էր արել և նա մոռու մուրաֆա էր ցանկացել, ասեց, որ նրա հատկանիշը գիտակցություն չունենալն է: Հաջորդ օրը այդ մարդը եկավ և ասեց, որ նա գնացել է հանրային գրադարան և հանրագիտական բառարաններում չորս լեզվով նայել է “գիտակցություն” բառի իմաստը: Գ.-ն պարզապես գլխով արեց:

Նույն փորձի մյուս անդամին Գ.-ն ասեց, որ նա *ամոթ չունի*, և նա անմիջապես մի շատ զարմանալի կատակ արեց ինքն իր մասին:

Այս անգամ Գ.-ն Նևսկիին հարող Լիտեյնի փողոցի շենքերից մեկում մնաց: Նա շատ մրսել, հիվանդացել էր, և մեր հանդիպումները մենք անցկացնում էինք իր մոտ, փոքր խմբերով:

Մի օր նա ասեց, որ մենք այսպես այլևս չենք կարող շարունակել և մենք պետք է հստակ որոշում կայացնենք, թե արդյոք ուզում ենք շարունակել իր հետ աշխատել, թե ավելի լավ կլինի դադարենք որևէ փորձեր կատարելուց այս ուղությամբ, քանի որ կիսալուրջ վերաբերմունքը լուրջ արդյունքների չի կարող բերել: Նա ավելացրեց, որ կշարունակի աշխատել միայն նրանց հետ, ովքեր հստակ որոշում կկայացանեն պայքարել մեխանիկականության և քնի դեմ:

- Մինչ այժմ դուք արդեն հասկացել եք, - ասեց նա, - որ ձեզնից ոչ-մի սարսափելի բան չի պահանջվում: Բայց իմաստ չունի երկու աթոռների մեջտեղը նստել: Այն մարդիկ, ովքեր չեն ուզում արթնանալ, թող հանգիստ շարունակեն քնել:

Նա ասեց, որ մեզնից յուրաքանչյուրիս հետ նա խոսելու է առանձին-առանձին և մենք պետք է հիմնավոր պատճառ բերենք, թե ինչու ինքը, այսինքն՝ Գ.-ն, պետք է մտահոգվի մեզ համար:

- Ձեր կարծիքով այս ամենը ինձ շատ մեծ բավականություն է պատճառում, - նա ասեց, - կամ կարծում եք, թե ես այլևս ուրիշ բան չունեմ անելու: Եթե այդպես եք կարծում, ապա չարաչար սխալվում եք: Բազմաթիվ այլ բաներ կան, որ ես կարող եմ անել: Իսկ եթե ես իմ ժամանակը *սրան* եմ հատկացրել, ապա դա նշանակում է որ ես կոնկրետ նպատակ ունեմ: Մինչ այժմ դուք պետք է, որ արդեն հասկանալիք, թե որն է իմ նպատակը և թե արդյո՞ք դուք էլ եք այն նույն ուղու վրա, ինչ ես եմ: Ես այլևս ոչինչ չեմ ավելացնի: Բայց սրանից հետո ես միայն կաշխատեմ նրանց հետ, ովքեր ինձ օգտակար կլինեն իմ նպատակին հասնելու համար: Միայն այն մարդիկ կարող են ինձ օգտակար լինել, ովքեր հաստատ որոշում կայացրած կլինեն պայքարել իրենք իրենց դեմ, այսինքն՝ պայքարել մեխանիկականության դեմ:



Մրանով գրույցն ավարտվեց: Գ.-ի գրույցները խմբի անդամների հետ մոտ մեկ շաբաթ տևեցին: Որոշ մարդկանց հետ նա շատ երկար խոսեց, մյուսների հետ՝ ոչ այդքան: Վերջապես գրեթե բոլորը մնացին:

Պ.-ն՝ միջին տարիքի այն մարդը, ում մասին նշեցի անհատականությունը էությունից բաժանելու փորձի հետ կապված, շատ արագ իրավիճակը պատվով շտկեց՝ դառնալով մեր խմբի ակտիվ անդամ, և միայն առիթից առիթ էր ընկնում ձևականությանությունների ետևից կամ երևույթները բառացի ընդունելու:

Միայն երկուսը հեռացան, որոնք կարծես իսկապես ինչ-որ մի կախարդանքով դադարեցին որևէ բան հասկանալ Գ.-ի ասածներից՝ դրանք թյուրիմացություններ համարելով, իսկ մնացածի հանդեպ դադարեց հարգանքը և վերացավ համակրանքը:

Մեր նկատմամբ տածած այս վերաբերմունքը, որը սկզբից չվստահող և կասկածելի, այնուհետև բացահայտ թշնամական էր մեզանից մեծ մասի հանդեպ, ոչ մեկի համար պարզ չէր, թե որտեղից են գալիս այդ բազմաթիվ տարօրինակ և անսպասելի մեղադրանքները, որոնք մեզ շատ էին ապշեցնում:

“Մենք ամեն ինչ գաղտնի էինք անում”. մենք չէինք պատմում նրանց, թե ինչ է Գ.-ն ասում իրենց մասին իրենց բացակայությամբ, հեքիաթներ էինք պատմում Գ.-ին, որպեսզի իր մոտ նրանց հանդեպ անվստահություն առաջանա: Մենք նրան պատմեցինք մեր ունեցած բոլոր գրույցները՝ իրեն գցելով միանգամայն թյուրիմացության մեջ, խեղաթյուրելով բոլոր փաստերը և փորձելով ամեն ինչ բացասական կողմով ներկայացնել: Գ.-ի մոտ նրանց նկատմամբ բացարձակապես ուրիշ տպավորություն թողեցինք՝ ստիպելով նրան ամեն ինչ տեսնել իրական եղելությունից շատ հեռու:

Միևնույն ժամանակ Գ.-ն ինքը շատ փոխվեց, ընդհանրապես առաջվանը չէր, դարձել էր շատ կոպիտ, պահանջկոտ, դարձել էր զգացմունքային և հետաքրքրություն էր ցուցաբերում անհատների նկատմամբ, դադարել էր պահանջել ճշմարտությունն ասել, նախընտրում էր իր շուրջ ունենալ մարդկանց, ովքեր վախենում էին իրեն ճշմարտությունն ասել, ովքեր երեսփոխան էին, ովքեր միմյանց ծաղիկներ կնվիրեին, բայց միևնույն ժամանակ կլրտեսեին իրենց:

Մենք բոլորս ապշած էինք այս ամենից և խոսակցություններից: Այդ ամենը մի մթնոլորտ էր ստեղծում, որը սրանից առաջ երբեք չէր եղել: Հատկապես տարօրինակ էր այն փաստը, որ հենց այս ժամանակ մեզնից շատերը շատ զգացմունքային էին դարձել և հատկապես տրամադրված էին խմբի այս երկու ընդդիմադիր անդամների դեմ:

Մենք բազմիցս փորձեցինք Գ.-ի հետ խոսել նրանց մասին: Նա երկար ծիծաղում էր, երբ մենք իրեն պատմում էինք նրանց արտահայտած մտքերի մասին և միշտ “սխալ տպավորություն” էինք ուզում թողնել նրանց վերաբերյալ: Գ.-ն ասեց.

- ԻՆՔԱՆ շատ են իրենք գնահատում աշխատանքը և ի՛նչ տխմարն են ես իրենց տեսանկյունից, ի՛նչքան հեշտ է ինձ խաբելը: Տեսնում եք, որ նրանք դադարել են ամենակարևորը հասկանալուց: Աշխատանքի ընթացքում ուսուցչին հնարավոր չէ խաբել: Մա օրենք է, որը բխում է գիտելիքի և լինելու մասին ասվածից: Ես կարող եմ խաբել ձեզ, եթե ցանկանամ, բայց դուք ինձ խաբել չեք կարող: Եթե դա հակառակը լիներ, դուք ինձնից ոչինչ չէիք սովորի, իսկ ես ձեզնից սովորելու բան կունենայի:

- Ինչպե՞ս պետք է մենք նրանց հետ խոսենք կամ ինչպե՞ս կարող ենք օգնել նրանց վերադառնել խումբ, - հարցրեց մեզնից մեկը:

- Դուք ոչ միայն չեք կարող որևէ բան անել, - ասեց Գ,-ն, այլև դուք պետք է և ոչ մի փորձ էլ չանեք, քանի որ դրանով նրանց կզրկեք վերջին հնարավորությունից հասկանալու և տեսնելու իրենք իրենց: Միշտ էլ շատ դժվար է դարձի գալ: Դա պետք է լինի կամավոր որոշում առանց կողմնակի համոզելու կամ ճնշման: Պետք է հասկանաք, որ այն ամենը, ինչ լսել էք իմ և ձեր մասին պարզապես ինքնաարդարացման փորձեր են, փորձեր՝ ուրիշներին մեղադրելով զգալու, որ իրենք ճիշտ են: Դա նշանակում է ավելի ու ավելի խաբել: Դա պետք է վերացնել, բայց դա հնարավոր է միայն տառապանքների շնորհիվ: Եթե առաջ նրանց համար բարդ էր իրենք իրենց տեսնելը, ապա այժմ այն տասն անգամ ավելի բարդ է:

- Ինչպե՞ս կարող էր սա տեղի ունենալ, - հարցրեց մեկը, - Ի՞նչ պատճառով նրանց ունեցած վերաբերմունքը մեր բոլորի և Ձեր հանդեպ այդպես միանգամից և անսպասելի փոխվեց:

- Ձեզ համար սա առաջին դեպքն է, այդ իսկ պատճառով այն ձեզ տարօրինակ է թվում, բայց հետագայում դուք նմանատիպ շատ դեպքերի կհանդիպեք և կտեսնեք, որ դրանք բոլորը նույն կերպ են տեղի ունենում: Հիմնական պատճառն այն է, որ հնարավոր չէ նստել երկու աթոռների մեջտեղում: Իսկ մարդիկ շատ հաճախ կարծում են, որ այդպես հնարավոր է, որ հնարավոր է ձեռք բերել նորը՝ պահպանելով հինը: Նրանք դա անում են, իհարկե, անգիտակցաբար, բայց արդյունքը, այնուամենայնիվ, նույնն է: Իսկ ամենից շատ ի՞նչն են նրանք ցանկանում պահպանել. նախ և առաջ մարդկանց մտքերը գնահատելու իրենց իրավունքը, այսինքն՝ իրենց կորցրածներից ամենացավալին: Նրանք հիմարներ են և արդեն այդ մասին գիտեն, ինչ-որ մի կետում նրանք արդեն դա գիտակցել են: Այդ իսկ պատճառով նրանք գալիս են սովորելու, բայց հաջորդ րոպեին այս ամենի մասին մոռանում են: Նրանք սկսում են ցուցաբերել իրենց ճղճիմ անձնական վերաբերմունքը: Նրանք սկսում են քննադատել ինչպես ինձ, այնպես էլ բոլոր մնացածներին, ասես դրա իրավունքն ունեն: Այս ամենն է անմիջապես արտահայտվում է իրենց արտահայտած մտքերում և իմ ասածների նկատմամբ իրենց վերաբերմունքից: Արդեն նրանք “մի բան ընդունում են”, “մեկ այլ բան չեն ընդունում”, համաձայնվում են որևէ բանի հետ, իսկ մյուսի հետ՝ ոչ, մի հարցում ինձ վստահում են, մեկ այլ հարցում՝ ոչ: Իսկ ամենահետաքրքիրն այն է, որ նրանք մտածում են, որ կարող են աշխատել այդպիսի պայմաններում, այսինքն՝ առանց ինձ վստահելու ամեն հարցում և իմ ասածները ընդունելու: Իրականում այսպես ընդհանրապես հնարավոր չէ: Չընդունելու ու չվստահելու արդյունքում նրանք անմիջապես հորինում են մի նոր բան դրա փոխարեն: Սրանով սկսվում է թյուրիմացությունը՝ նոր տեսություններ, բացատրություններ, որոնք ոչ-մի ընդհանուր բան չունեն աշխատանքի կամ իմ ասածների հետ: Այնուհետև նրանք սկսում են սխալներ փնտրել իմ և մնացած բոլորի ասածների կամ արածների մեջ: Այդ պահից սկսած իմ ասածները նրանց համար իմաստ չեն պարունակում, և նրանք դա շատ ավելի լավ են հասկանում, քան ես, իսկ իմբի բոլոր մնացած անդամները պարզապես հիմարներ են, տխմարներ, և այսպես շարունակաբար: Երբ մարդը ինչ-որ թիվ բան ասում է այս առիթով, ես արդեն գիտեմ, թե ինչ է նա ասելու հետագայում: Դուք նույնպես կկրարողանաք դա իմանալ՝ տեսնելով հետևանքները: Հետաքրքիր է, որ մարդիկ կարող են տեսնել, երբ դա վերաբերում է ուրիշներին, իսկ երբ նրանք սկսում են խենթ բաներ անել, դա տեսնել նրանք ի վիճակի չեն: Սա օրինաչափություն է: Ավելի դժվար է սարը բարձրանալ, քան սահելով իջնել: Նրանք

նույնիսկ չեն էլ ամաչում, երբ այսպես են վարվում ինձ և մնացածի հետ: Ավելին՝ նրանք այս ամենը ինչ-որ կերպ կապում են ինչ-որ “աշխատանքի” հետ: Նրանք չեն ուզում հասկանալ, որ երբ մարդը հասնում է այդ աստիճանին, նրա երգն արդեն երգված է:

Ուշադրություն դարձրեք ևս մեկ հանգամանքի վրա՝ դրանք երկուսն են: Եթե նրանք առանձին լինեին, ամեն մեկն իր համար, ապա իրենց ավելի հեշտ կլինեք գիտակցել իրենց վիճակը և փորձել վերադառնալ: Բայց նրանք երկուսն են, ընկերներ, ովքեր պաշտպանում են միմյանց թույլ կողմերը: Այժմ նրանք առանց մեկը մյուսի չեն կարող վերադառնալ: Այժմ նույնիսկ եթե նրանք ցանկանան վերադառնալ, ես միայն մեկին կընդունեմ:

- Իսկ ինչու, - հարցրեց մեկը:

- Դա ընդհանրապես մեկ այլ հարց է, - ասեց Գ.-ն, - այժմ գլխավոր խնդիրը կայանում է ընկերներից մեկին ստիպել մտածել, թե ով է ավելի կարևոր՝ ես, թե իր ընկերը: Եթե նա ավելի կարևոր է, քան ես, ապա այստեղ այլևս ոչինչ չկա խոսելու, իսկ եթե ես ավելի կարևոր եմ, ապա նա ստիպված է լքել իր ընկերոջը և վերադառնալ մենակ: Այնուհետև միայն կարող է և հաջորդը վերադառնալ: Բայց պետք է ասեմ, որ նրանք կառչում են մեկը մյուսից և այդպիսով խանգարում իրար: Սա վառ օրինակ է, թե ինչպես են մարդիկ իրենց համար ամենավատ բանը անում, երբ հեռանում են մի բանից, որը լավ է իրենց համար:

Հոկտեմբերին Գ.-ի հետ գտնվում է Մոսկվայում:

Բոլշայա Դմիտրովկայում գտնվող իր փոքրիկ բնակարանը, որի բոլոր պատերը պատված էին արևելաերոպական ոճի գորգերով, իսկ առաստաղները՝ թավշյա կտորներով, ինձ ապշեցրեց իր յուրօրինակ մթնոլորտով: Նախ և առաջ մարդիկ, որ գալիս էին այտեղ՝ Գ.-ի աշակերտները, *չէին վախենում լռել*: Սա շատ տարօրինակ էր: Նրանք գալիս էին, նստում, ծխում և ժամերով կարող է նույնիսկ մեկ բառ չխոսել: Եվ այդ լռության մեջ ոչ մի ստիպողական կամ տհաճ բան չկար, ընդհակառակը՝ վստահության զգացում էր սփռված և ազատություն ստիպողաբար հնարած դերեր խաղալուց ը: Բայց երբեմն հետաքրքրասեր այցելուների մոտ այն շատ արտասովոր տպավորություն էր թողնում: Նրանք սկսում էին խոսել և անդադար խոսում էին՝ ասես վախենալով կանգ առնել, ինչ-որ բան զգալ: Պատահում էր, որ մարդիկ կարող էին վիրավորված զգալ իրենց: Նրանց մոտ այն տպավորությունն էր առաջանում, որ այդ լռությունը ուղղված է նրանց դեմ ցույց տալու համար, թե ինչպիսի գերադաս դիրքում են Գ.-ի աշակերտները գտնվում և որ նույնիսկ չարժե իրենց հետ խոսել: Մյուսները լռության մեջ իմաստ չէին գտնում, անբնական էին համարում, գտնում էին, որ դա մեր ամենավատ կողմերն է ի հայտ բերում, մասնավորապես մեր թուլությունը և Գ.-ին ենթակա լինելու հանգամանքը, ով մեզ վրա “ճնշում էր գործադրում”:

Պ.-ն որոշեց իր մոտ արձանագրել տարբեր մարդկանց պատասխան արձագանքը լռությանը: Ես հասկացա, որ մարդիկ ամենաշատը վախենում են լռությունից, որ իրենց խոսելու ցանկությունը առաջանում է ինքնապաշտպանությունից, ոչինչ չտեսնելու ցանկությունից, ինքն իրեն խոստովանել չցանկանալուց:

Ես նկատեցի Գ.-ի տանը բնորոշ մի բավականին տարօրինակ հատկություն: Այնտեղ հնարավոր չէր ստել: Այտեղ սուտը միանգամից տեսանելի էր դառնում, շոշափելի և բացահայտ: Մի անգամ եկավ Գ.-ի ծանոթներից մեկը, ում ես նախկինում էլ էի հանդիպել, և ով երբեմն հաճախում էր Գ.-ի խումբ: Ինձնից բացի երկու-երեք մարդ էլ կար այնտեղ: Գ.-ն տանը

չէր: Լոռւոյն մեջ մի քիչ նստելուց հետո հյուրը սկսեց պատմել այն մասին, թէ ինչպէս է նա քիչ առաջ մեկին հանդիպել, ով իրեն պատերազմի և այն վերջանալու մասին շատ հետաքրքիր բաներ է պատմել: Եվ հանկարծ ես զգացի, որ նա ստում է: Նա ոչ մեկին էլ չէր հանդիպել և ոչ-մի այդպիսի բան էլ իրեն չէն պատմել: Նա այդ ամենը պարզապէս հորինում էր, քանի որ այլևս չէր կարող հանդուրժել լռութիւնը:

Ես շատ տարօրինակ էի զգում ինձ, երբ նայում էի նրան: Ինձ թվում էր, թէ եթէ ես նորից նայեմ նրան, ապա նա գլխի կընկի, որ ես հասկացել եմ, որ ինքը ստում է: Նայելով մյուսներին՝ նրանց մոտ տեսա նույն զգացումը, ինչ ինձ մոտ էր, և նրանք հագիվ էին կարողանում զսպել ծիծաղը: Ես նորից նայեցի խոսողին և տեսա, որ նա ամենևին էլ չէր նկատում որևէ բան, և շարունակում էր արագ-արագ խոսել՝ ավելի խորանալով իր թեմայի մեջ, չտեսնելով մեր հայացքների ակամա փոխանակումը:

Սա միակ դեպքը չէր: Ես հիշեցի մեր կյանքը պատմելու փորձերը ամռանը և այն “տոնայնությունը”, որով խոսում էինք, երբ ցանկանում էինք որևէ բան թաքցնել: Երբ մարդը շատախոսում է կամ պարզապէս հնարավորություն է փնտրում սկսելու խոսել, նա չի կարող ուրիշների տոնայնությունների փոփոխությունը նկատել, ոչ էլ կարող է սուտը ճշմարտությունից տարբերել: Իսկ երբ նա լուռ է, այսինքն՝ մի քիչ արթնանում է, սկսում է տարբերել տոնայնությունները և զգում է ուրիշների սուտը:

Մենք բազմիցս խոսել ենք Գ.-ի աշակերտների հետ այս թեմայի շուրջ: Ես պատմեցի նրանց “քնած մարդկանց” դեպքը Ֆինլանդիայում և Սանկտ Պետերբուրգի փողոցներում: Գ.-ի բնակարանում մարդկանց մեխանիկորեն ստելու հանգամանքը ինձ շատ հիշեցրեց “քնած մարդկանց”:

Ես շատ էի ցանկանում իմ Մոսկվայի ընկերներից մի քանիսին ծանոթացնել Գ.-ի հետ, բայց բոլոր նրանցից միայն Վ. Ա. Ա.-ն՝ իմ հին ընկերը թերթից, թողեց ինձ մոտ հարաբերականորեն արթուն տպավորություն, չնայած որ միշտ մխրճված էր գործերի մեջ և միշտ վազքի մեջ էր մի տեղից մյուսը: Այնուամենայնիվ, նա շատ հետաքրքրված էր, և նրա մասին Գ.-ին պատմելուց և իրենից թույլատվություն ստանալուց հետո կանչեցի նրան Գ.-ի տուն ճաշելու:

Գ.-ն մոտավորապէս տասնհինգ հոգու կանչել էր ճաշի, որը այդ ժամանակ մեծ ճոխություն էր համարվում՝ երշիկեղենով, բլիթներով, խորովածով, Կախեթիայի գինով և այլն: Մի խոսքով, դա տիպիկ կովկասյան ճաշ էր, որը կարող էր սկսվել կեսօրին և մինչև երեկո ձգվել: Նա Ա.-ին նստեցրեց իր կողքին, շատ բարյեացկամ վերաբերմունք ցուցաբերեց, ամբողջ ժամանակ զբաղեցնում էր նրան, գինի լցնում նրա համար: Հանկարծ իմ սիրտը լցվեց, երբ գիտակցեցի, թէ ինչ փորձության եմ բերել հին ընկերոջս: Հարցն այն էր, որ բոլորը լուռ էին: Ա.-ն մոտ հինգ բոպե դիմացավ, այնուհետև սկսեց խոսել: Նա սկսեց խոսել պատերազմից, մեր դաշնակիցների և թշնամիների մասին՝ միասին վերցված և առանձին-առանձին: Նա խոսեց Մոսկվայի և Պետերբուրգի բոլոր տղամարդկանց արտահայտած վարկածներից, ամեն ինչից: Այնուհետև սկսեց խոսել բանակի համար չորացված բանջարեղենից (որով նա այդ ժամանակ զբաղվում էր լրագրությունից զատ), հատկապէս չորացրած սոխի մասին, այնուհետև արհեստական վարքագծից, գյուղատնտեսական քիմիայից կամ առհասարակ քիմիայից, հողի “մեյուրացիայի” մասին, հոգևորի մասին, “ձեռքերի իրացման” և ուրիշ շատ այլ թեմաներից, որոնք ես այլևս չեմ հիշում: Ոչ Գ.-ն, ոչ էլ մնացածը մեկ բառ անգամ չասեցին: Ես արդեն

ցանկանում էի խոսել՝ վախենալով, որ Ա.-ն կվիրավորվի, սակայն Գ.-ն ինձ այնպիսի մի դաժան հայացքով նայեց, որ միանգամից հետ կանգնեցի այդ մտքից: Բացի այդ, իմ վախը շատ ի գուր էր: Խեղճ Ա.-ն ոչ մի բան էլ չէր նկատում և այնպես էր տարվել իր հոռետորությամբ, որ չդադարեց խոսելը մինչ ժամը չորսը: Այնուհետև նա գոհունակությամբ սեղմեց Գ.-ի ձեռքը, շնորհակալություն հայտնեց “շատ հետաքրքիր” գրույցի համար: Գ.-ն ինձ նայելով՝ խորամանկ ծիծաղեց:

Ես ինձ շատ վատ զգացի: Նրանք խեղճ Ա.-ի հետ հիմարի պետ վարվեցին: Նա, իհարկե, այդպիսի բան ամենին էլ չէր անկնկալում, այդ իսկ պատճառով էլ կերավ խայծը: Ես հասկացա, որ Գ.-ն իր աշակերտների համար էր այդ ցուցադրությունը կազմակերպել:

- Տեսնում եք, - ասեց նա Ա.-ի գնալուց հետո, - նա խելացի մարդ էր համարվում, բայց նույնիսկ չէր էլ գիտակցի, եթե ես իր հագից տաքատը հանեի: Միայն թողեք, որ նա խոսի: Նրան ուրիշ ոչինչ պետք չէ: Եվ բոլորն են այդպես: Նրանից շատ ավելի վատերն էլ կան: Նա գոնե ստեր չէր խոսում և իսկապես գիտեր, թե ինչի մասին է խոսում իր պատկերացմամբ: Բայց մտածեք մի պահ՝ ինչ օգուտ կա նրանից: Նա այլևս երիտասարդ չէ, և հավանաբար սա կյանքում իր միակ հնարավորությունն էր ճշմարտությունը լսելու համար, իսկ նա ամբողջ ժամանակ խոսում էր ինքն իր հետ:

Մոսկվայում Գ.-ի հետ ունեցած գրույցներից հիշում եմ մեկի մասին, որը կապված է Պետերբուրգի գրույցներից մեկի հետ, որի մասին արդեն պատմել եմ: Այս անգամ Գ.-ն ինքը սկսեց խոսել:

- Որն է քո կարծիքով ամենակարևոր բանը, որ սովորել ես մինչ այժմ:

- Իհարկե, այն փորձառությունը, որը ձեռք եմ բերել օգոստոսին, - պատասխանեցի ես, - եթե իմ կամքով լինեք, ապա կուզենայի այդ ամենը օգտագործել: Դա է այն ամենը ինչ կցանկանայի, քանի որ այդ դեպքում դրա օգնությամբ կկարողանայի գտնել մնացածը: Միևնույն ժամանակ գիտեմ, որ այս “փորձառությունը”, ես միտումնավոր ընտրեցի հենց այս բառը, քանի որ ավելի հարմար բառ չկար, դուք հասկանում եք, թե ինչ է նկատի ունեմ (Գ.-ն գլխով արեց), ազդեց իմ հոգեկան վիճակի վրա, որում ես այն ժամանակ գտնվում էի: Եվ ես գիտեմ, որ այն միշտ էլ կապված կլինի սրանից: Եթե ես կարողանայի այդպիսի հոգեկան վիճակ ստեղծել ինքս իմ մեջ, ապա շատ շուտ կկարողանայի այդ փորձը ձեռք բերել: Բայց ես դրանից շատ հեռու եմ գտնվում, չնայած որ քնած էի: Սա այն “քունն” էր, որ արթուն էր: Ինչպե՞ս կարելի է այս հոգեկան վիճակը ստանալ: Ասե՛ք ինձ, ինդրում եմ:

- Երեք ճանապարհով, - ասեց Գ.-ն, - նախ և առաջ, այս հոգեվիճակը ինքն իրեն է գալիս հանկարծակի, երկրորդը՝ մեկ ուրիշը կարող է այն ստեղծել քո մեջ և երրորդը՝ դու կարող ես ստեղծել քո մեջ: Ո՞րն ես դու նախընտրում:

Պետք է խոստովանեմ, որ մի պահ շատ մեծ ցանկություն ունեի ասելու, որ ցանկանում եմ մեկ ուրիշը այն արթնացնի այդ հոգեվիճակը, բայց միանգամից հասկացա, որ նա կպատասխանի, թե ինքն արդեն դա մի անգամ արել է ինձ հետ և այժմ ես կամ պետք է սպասեմ մինչ այն ինքն իրեն կատարվի, կամ էլ ինքս մի բան անեմ, որ այն սկսվի:

- Ես, իհարկե, ուզում եմ ինքս ստեղծել այդ հոգեվիճակը, բայց ինչպե՞ս պետք է դա անել:

- Ես արդեն ասել եմ, որ դրա համար գոհողությունների է պետք գնալ, առանց գոհողության ոչինչ անել հնարավոր չէ: Բայց եթե աշխարհում գույություն ունի մեկ բան, որ մարդիկ չեն

հասկանում, դա զոհողության գնալն է: Նրանց կարծիքով իրենք պետք է իրենց ունեցած ինչ-որ մի բան զոհեն: Օրինակ՝ ես մեկ քան անգամ ասեցի, որ մարդիկ պետք է զոհեն իրենց “հավատը”, “հոգեկան հանգստությունը”, “առողջությունը”: Մա նրանք բառացի են հասկանում: Բայց հարցն այն է, որ նրանք ո՛չ հավատ ունեն, ո՛չ հոգեկան հանգստություն, ոչ էլ առողջություն: Բոլոր այս բառերը պետք է չակերտավոր հասկանալ: Իրականում նրանք պետք է միայն զոհաբերեն այն, ինչ իրենք կարծում են, թե ունեն, բայց իրականում չունեն: Նրանք պետք է իրենց երևակայությունը զոհաբերեն: Բայց դա իրենց համար դժվար է, չափազանց դժվար և շատ ավելի հեշտ է իրական բաները զոհաբերել:

Մարդիկ նաև պետք է զոհաբերեն իրենց տառապանքները, որը նույնպես շատ դժվար է: Մարդ բոլոր հաճույքներից կիրաժարվի, բայց ոչ իր տառապանքներից: Նա այնպես է ստեղծված, որ աշխարհում տառապանքներից բացի ոչ մի բանի հետ նա այդքան կապված չէ: Իսկ դրանից պետք է ազատվել: Այն մարդը, որ չի ազատվել իր տառապանքներից, ով դեռ չի զոհաբերել դրանք, չի կարող աշխատել: Հետագայում դեռ շատ կխոսենք տառապելու մասին: Ոչ մի բան առանց տառապանքի հնարավոր չէ ձեռք բերել, բայց այդ տառապանքից էլ պետք է ձերբազատվել: Իսկ այժմ ժամանակն է, որ իմ ասածների փակագծերը փորձես ինքդ բացել:

Ես մոտ մեկ շաբաթ մնացի Մոսկվայում և վերադարձա Սանկտ Պետերբուրգ՝ լի մտքերով և տպավորություններով: Այս ժամանակ մի հետաքրքիր դեպք տեղի ունեցավ, որն ինձ օգնեց հասկանալ շատ բաներ համակարգի և Գ.-ի սովորեցնելու մեխանիզմների մասին:

Մոսկվայում մնալու ընթացքում Գ.-ի աշակերտները ինձ տարբեր օրենքներ բացատրեցին կապված մարդու և աշխատի հետ: Դրանից բացի նրանք ինձ նորից ցույց տվեցին “հիդրոգենների սյունակ”, ինչպես որ այն անվանում էինք Սանկտ Պետերբուրգում, բայց մի փոքր ավելի ըղլայնված տարբերակով: Մասնավորապես, բացի “հիդրոգենների” երեք աստիճանների, որ Գ.-ն մեզ ցույց էր տվել, նրանք ավելի էին մանրացվել և դրանք արտահայտել էին տասներկու աղյուսակներում: (Տես աղյուսակ 4)

Այսպես այն շատ ավելի հասկանալի էր: Ես չկարողացա այլևս ինքս ինձ համոզել, որ աղյուսակների կրճատված տարբերակը ավելի արդյունավետ է:

- Օրինակ, Էֆ-վերցնենք յոթերորդ սյունակը, - ասեց Պ.-ն, - գերագույնը այստեղ “ջրածին” 96-ն է: Կրակը կարող է օրինակ ծառայել “ջրածին” 96-ին: Ուրեմն կրակը գերագույն կարելի է համարել փայտի մի կտորի համար: Վերցնենք իններորդ սյունակը: Այստեղ գերագույնը “ջրածին” 384-ն է, կամ այլ կերպ ասած՝ ջուրը: Ջուրը կարող է գերագույն լինել շաքարի համար:

Ճիշտն ասած ես ամբողջովին չկարողացա հասկանալ այն մեթոդը, որին հիմնվելով կարելի է օգտագործել այս սյունակը: Պ.-ն ինձ ցույց տվեց մի աղյուսակ, որը գծված էր մինչև հինգերորդ սյունակը այլ աշխարհներում իր զուգահեռ մակարդակներով: Ես դրանից գլուխ չհանեցի: Սկսեցի մտածել, թե արդյոք հնարավոր է իրար միացնել այս բոլոր տարբեր սյունակները իրենց տարբեր տիեզերքներով: Սրա մեջ խորանալով՝ ես միանգամայն այլ սխալ ուղղությամբ սկսեցի մտածել, քանի որ տիեզերքները ոչ մի կապ չունեին սյունակների հետ: Միևնույն ժամանակ սկսեցի մտածել, որ այլևս չեմ հասկանում ”ճառագայթման երեք օկտավաներից”, որոնցից “ջրածինների” աղյուսակը ստացվում է: Հիմնական անհասկանալի

մասը այստեղ առաջին, երկրորդ, երրորդ, և առաջին, երրորդ, երկրորդ ուժերի և “կարբոնի”, “թթվածնի” և “ազոտի” հարաբերություններն էին:

Միևնույն ժամանակ գիտակցում էի, որ սա շատ կարևոր է հասկանալը և Մոսկվայից հեռացա մի շատ տհաճ զգացումով, որ ես ոչ միայն ոչ մի նոր բան չսովորեցի, այլ նաև կորցրեցի իմ հին սովորածը, այն, ինչ կարծում էի, որ հասկացել եմ:

Մենք խմբում պայմանավորվել էինք, որ ով գնում է Մոսկվա և որևէ նոր բան է սովորում, Պետերբուրգ գալուն պես պետք է այն բացատրի մյուսներին: Սանկտ Պետերբուրգի ճանապարհին նորից վերլուծում էի Մոսկվայի մեր զրույցները և զգացի, որ այն չեմ կարող բացատրել Պետերբուրգում, քանի որ ես ինքս այն չեմ հասկացել: Դա ինձ նյարդայնացնում էր, և ես չգիտեի, թե ինչ անեմ: Այս հոգեվիճակում ժամանեցի Պետերբուրգ և հաջորդ օրը գնացի մեր հանդիպմանը:

Փորձելով սկզբից նկարել “աղյուսակները” այնքան, որքան հնարավոր է, ինչպես մենք անվանում էինք Գ.-ի համակարգի մասը, անդրադառնալով հիմնական հարցերին և օրենքներին՝ ես սկսեցի իմ ճանապարհորդության ընդհանուր իմաստը հասկանալ: Ամբողջ ընթացքում ես մեկ բան էի ասում, բայց իմ գլխում մեկ այլ բան էր պտտվում: Ինչպե՞ս պետք է սկսեմ: Ի՞նչ է նշանակում առաջին, երկրորդ, երրորդի փոխակերպումը առաջինի, երրորդի, երկրորդի: Ինչպե՞ս է հնարավոր այսպիսի մի փոխակերպման օրինակ գնտել:

Զգում էի, որ պետք է անպայման անմիջապես մի բան գտնեմ, քանի որ մինչև չգտնեմ, մյուսներին ոչինչ ասել չեմ կարող: (աղյուսակ 4)

Սկսեցի աղյուսակը գրատախտակին նկարել: Դա երեք օկտավաների ճառագայթման աղյուսակն էր՝ գերագույն արև-երկիր-լուսին: Մենք արդեն ծանոթ էինք այս տերմինալոգիային Գ.-ի ներկայացրածներից: Բայց ես գաղափար չէի կազմում, թե ինչ եմ ասելու սրանից հետո, ինչն իրենք արդեն գիտեին: Եվ հանկարծակի՝ մեկ բառ եկավ միտքս, որը Մոսկվայում ընդհանրապես չէր ասվել, բայց որն ամեն ինչ բացատրում և կապում էր իրար հետ՝ “շարժական աղյուսակը”: Հասկացա, որ պետք է պատկերացնել, թե իբր այս աղյուսակը շարժվում է, որ այս շղթայի բոլոր անդամները փոխում են իրենց տեղերը մի առեղծվածային պարում:

Ես մի պահ այնքան տարվեցի այս բառով, որ դադարեցի լսել, թե ինչ եմ խոսում: Մտքերս իմի բերելուց հետո տեսա, որ նրանք ինձ էին լսում, և ես նրանց բացատրել եմ այն ամենը, որը ես չէի կարողանում հասկանալ հանդպիման գալու ժամանակ: Այն ինձ տարօրինակ զգացումներ տվեց և ինձ մոտ այն տպավորությունն էր, ասես հենց նոր կարողացա ինձ համար նոր հնարավորություններ բացահայտել՝ ուրիշներին բացատրելով ինքդ հասկանալու մեթոդը: Եվ երբ այս ազդեցության տակ ասեցի, որ դրա օրինակները կամ համարժեքները՝ առաջին, երկրորդ և երրորդի փոխակերպումը առաջինի, երրորդ, երկրորդի, պետք է է գտնել իրական աշխարհում, ես իսկույն ևեթ այդ օրինակները պատկերացրեցի և՛ մարդու օրգանիզմում, և՛ աշխարհում, և՛ մեխանիկայի, ալիքների շարժման մեջ:

Այնուհետև, խոսեցի Գ.-ի հետ տարբեր աղյուսակների մասին, որոնց նպատակը չէի հասկացել:

- Մենք պարզապես ժամանակ ենք վատնում կռահելու վրա, - ասեցի ես, - ավելի ճիշտ չէ՞ր լինի, եթե օգնեիք մեզ ավելի շուտ գտնելու դրանց պատասխանները: Դուք գիտեք, թե որքան քան դժվարություններ կար դեռ մեր առաջ, և մենք այսպիսի տեմպերով շարժվելու

դեպքում այդպես էլ տեղ չենք հասնի: Դուք ինքներդ եք բազմիցս ասել, որ մենք շատ քիչ ժամանակ ունենք:

- Հենց դա է պատճառը, որ քիչ ժամանակ կա և ձեր դիմաց կան ծառացած բազմաթիվ դժվարություններ, որ հարկավոր է վարվել այնպես, ինչպես ես եմ անում, - ասեց Գ.-ն, - եթե դուք վախենում ենք այդ դժվարություններից, ի՞նչ եք անելու հետագայում: Ձեր կարծիքով դպրոցներում ամեն ինչ ավարտուն կերպով են բացատրում: Այդ հարցին շատ միամտորեն եք նայում: Դուք պետք է խորամանկ լինեք, պետք է ձևացնեք, երկխոսություններից եզրակացություններ անեք: Երբեմն շատ բաներ կարելի է սովորել կատակներից, պատմություններից: Իսկ դուք ուզում եք, որ ամեն ինչ շատ հեշտ լինի: Այդպես հնարավոր չէ: Դուք պետք է սովորեք, թե ինչպես վերցնել, եթե այն ձեզ չեն տալիս, գողանալ, եթե դրա կարիքը կա, իսկ դուք սպասում եք, որ ինչ-որ մեկը գա և այն ձեզ տա: